

**ԱՆՁԻ ՀԱՏԿԱՆԻԺ ԱՐՏԱՀԱՅՏՈՂ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐՈՎ ԵՂԱՆԱԿԱՎՈՐՈՂ
ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ,
ՌՈՒՍԵՐԵՆՈՒՄ ԵՎ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ**

ՄԱՐԻԱՆԱ ԲԱԴԱԴՅԱՆ

Հոգվածում ուսումնասիրվում են անձի հատկանիշ արտահայտող բաղադրիչներով եղանակավորող և հաղորդակցական դարձվածքները հայերենում, ռուսերենում և անգլերենում: Եղանակավորող և հաղորդակցական արժեք ունեցող դարձվածային միավորները խոսքին յուրատեսակ երանգ ու հուզական լիցք են հաղորդում և ունեն հուզաարտահայտչական բնույթ: Խոսքն ավելի պատկերավոր ու դիպուկ դարձնելու համար մարդիկ հաճախ օգտագործում են հաղորդակցական արժեք ունեցող դարձվածային միավորներ: Այս դարձվածային միավորները հանդես են գալիս ինչպես բառային, ձևաբանական, այնպես էլ շարահյուսական համակարգերում և օժտված են նախադասությանը հատուկ բոլոր առանձնահատկություններով՝ քերականական կարգերով և հատկանիշներով:

Բանալի բառեր – եղանակավորող, հաղորդակցական դարձվածքներ, հատկանիշ, դարձվածային միավորներ, համակարգ, նախադասություն:

Դարձվածքները կամ դարձվածային միավորները ժողովրդի հոգևոր մշակույթի հարստությունն են և արտահայտում են նրա լեզվամտածողության ինքնատիպությունն ու յուրահատկությունը: Դարձվածքներում իրենց արտահայտությունն են գտել ժողովրդի պատմական հարուստ կենսավորձը, նրա պատկերացումներն օբյեկտիվ աշխարհի, առարկաների և երևույթների մասին, վերաբերմունքը մարդկային հարաբերությունների նկատմամբ: Դարձվածաբանական միավորները խոսքին տալիս են պատկերավորություն, արտահայտչականություն, դիպուկություն և ձերբազատում խոսքը միապաղաղությունից, միօրինակությունից ու չորությունից: Դարձվածաբանական միավորներով միտքն առավել դիպուկ և հստակ է հասնում նպատակին՝ ազատելով խոսքը տաղտկալի լինելուց:

Ա. Եղանակավորող դարձվածային միավորներ

Դիտարկվող երեք լեզուների դարձվածաբանական համակարգերում անվանողական դարձվածքների շարքում են դասվում նաև եղանակավորող

դարձվածային միավորները, այդ թվում՝ նաև անձի հատկանիշ արտահայտող բաղադրիչներով եղանակավորող դարձվածքները:

Եղանակավորող դարձվածքները խոսքին յուրատեսակ երանգ ու հուզական լիցք են հաղորդում, արտահայտում են խոսողի իմացական, գնահատողական կամ զգայական վերաբերմունքը և ունեն հուզաարտահայտչական բնույթ: Դրանք հիմնականում հաղորդակցական բնույթ ունեն և հանդես են գալիս որպես նախադասություններ:

Եղանակավորող դարձվածքները տարբեր արժեքներ են ներկայացնում: Որոշ եղանակավորող դարձվածքներ իմաստային երանգ են հաղորդում խոսքին, մյուսներն ազդում են խոսքի հուզական կողմի վրա և ցույց են տալիս խոսողի զարմանքը, հիացմունքը, հիասթափությունը կամ զայրույթը և կամ դժգոհությունը: Պ. Բեդիրյանը «Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն» գրքում գրում է. «Բազմաթիվ են այն եղանակավորող Դ-ները, որոնք, մանավանդ տարածված խոսակցական լեզվում ու բարբառներում, ներկայացնում են օրինանքի ու մաղթանքի, անեծքի ու հայիտյանքի խոսքեր ... Եվ վերջապես կան եղանակավորող Դ-ներ էլ, որոնք խոսքին որևէ իմաստ չեն հաղորդում, այլ խոսողի, պատմողի կամ գրուցողի կողմից օգտագործվում են իբրև պատմվող հատվածները իրար կցելու, խոսակցին դիմելու, նրա ուշադրությունը հրավիրելու կամ ուղղակի խոսքը ռճավորելու համար»¹:

Եղանակավորող դարձվածքների յուրահատկություններից են խոսքային միջավայրը և հնչերանգը: Դրանցից շատերը խոսքային տարբեր միջավայրում իմաստային կամ հուզական տարբեր երանգներ կարող են արտահայտել:

Եղանակավորող դարձվածային միավորները նոր չեն դիտարկվող երեք լեզուներում:

Հայերենում եղանակավորող դարձվածքների ծագման աղբյուրները կարող են լինել կենդանի լեզուն և բայական դարձվածքները: Եղանակավորող դարձվածքների միջոցով խոսողը խոսքի նկատմամբ արտահայտում է տարբեր վերաբերմունք, օրինակ՝ գոհունակություն, գովասանք, աղերսանք, մտերմական վերաբերմունք, բարեմաղթություն, երդում, ափսոսանք, հիացմունք, զարմանք, զայրույթ, հանդիմանություն և այլն: Եղանակավորող դարձվածքների ճնշող մասի մեջ բայը դրված է լինում ըղձական եղանակով: Սա ավելի շատ բնորոշ է օրինանքի ու անեծքի խոսքերին: Օրինակ.

¹ Պ. Բեդիրյան, Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, «Լույս» հրատ., 1973, էջ 163,164:

Աստված երկու բարիին մեկը տա (օրինանք - մաղթանք) – Տառապող, հիվանդ մարդուն:

Աստված խելքդ առնի (խսկց. հանդիմանական խոսք) - Անխելք, չմտածված խոսք բանողին:

Օրդ սև ու մուգ լինի (անեծք) - Դժբախտ լինես:

Տիպդ կտրվի կամ **տիպը կտրվի** (անեծք, երբեմն էլ՝ մտերմական հանդիմանություն) - Անշնորհք, անպիտանի մարդուն:

Լեզվիդ թու՛թ/փուշ բուսնի (ժող. անեծք) – Չարախոս մարդուն:

Մեկ Աստված ըսելուն կը հավատամ (ա/մ ժող.) – Խիստ ստախոս է, միայն երբ «Աստված մեկ է» ըսե՛ կը հավատամ:

Անեծքներում և օրինանքներում դարձվածքների գոյական բաղադրիչն ունի ստացական հոդի քերականական կարգը: Այստեղ ստացական **դ** հոդն ունի իմաստատարբերակիչ դեր, և դարձվածքը կիմաստազրկվի, եթե հոդն օտարվի:

Եղանակավորող դարձվածքների բայական բաղադրիչի ամենակարևոր առանձնահատկություններից մեկը եղանակի քերականական կարգն է: Դարձվածքների բայ բաղադրիչները հիմնականում գործածվում են ըղձական եղանակով, այլ եղանակների գործածությունը շատ հազվադեպ է: Թվի քերականական կարգը եղանակավորող դարձվածքներում առանձնապես դեր չի խաղում. այս կարգի գրեթե բոլոր դարձվածքներում գոյականները հանդես են գալիս միայն եզակի թվով: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ անձի հատկանիշ արտահայտող եղանակավորող դարձվածքները բավականին փոքր թիվ են կազմում հայերենում, իսկ ռուսերենում և անգլերենում չեն հանդիպում:

Հայերենում անձի հատկանիշ արտահայտող բաղադրիչներով եղանակավորող դարձվածքները կազմվում են կառուցվածքային տարբեր տիպերով, և դարձվածքների անդամները միմյանց հետ կապված են շարահյուսական տարբեր հարաբերություններով: Հիշյալ դարձվածքներում գործում են բայական և անվանական անդամներին բնորոշ քերականական կարգերը՝ թվի, դեմքի, հոդի, եղանակի:

Անձի հատկանիշ արտահայտող եղանակավորող դարձվածքներն օգտագործվում են ժողովրդախոսակցական լեզվում՝ ոճավորելով խոսքը: Եղանակավորող դարձվածքները եղանակավորող բառերի պես նախադասության անդամ չեն լինում և, հետևաբար, շարահյուսական պաշտոններ չեն կարող կատարել:

Բ. Հաղորդակցական դարձվածային միավորներ

Խոսքն ավելի պատկերավոր ու դիպուկ դարձնելու համար մարդիկ հաճախ օգտագործում են հաղորդակցական արժեք ունեցող դարձվածային միավորներ: Այս դարձվածային միավորները հանդես են գալիս ինչպես բառային, ձևաբանական, այնպես էլ շարահյուսական համակարգերում՝ որպես լեզվի հաղորդակցային մակարդակի իմաստակիր միավորներ, և օժտված են նախադասությանը հատուկ բոլոր առանձնահատկություններով՝ քերականական կարգերով և հատկանիշներով:

Ինչպես ցանկացած նախադասության, այնպես էլ հաղորդակցական դարձվածքներին հատուկ է ստորոգումը:

Մյուս առանձնահատկություններից են հնչերանգը և մտքի ավարտվածությունը: Շատ հաճախ մարդիկ փորձում են ավելի պատկերավոր ու արտահայտիչ դարձնել իրենց խոսքը և օգտագործում են միակազմ կամ թերի նախադասություններ. այս նախադասություններում առկա է հնչերանգային ատորոգումը:

Դարձվածային նախադասություններն ունեն հետևյալ առանձնահատկությունները.

ա) դարձվածային նախադասությունները վերարտադրվում են որպես խոսքի պատրաստի միավորներ:

բ) Ունեն իմաստային, բառային կազմի և գործառության կայունություն:

գ) Նախադասության իմաստն առաջանում է կապակցության բոլոր բաղադրիչների իմաստների գումարից:

դ) Նախադասություններն ունեն կայուն շարադասություն:

ե) Ստորոգյալը չունի խոնարհման լրիվ հարացույց:

զ) Պարզ նախադասությունները հնարավոր չէ փոխարինել բարդերով և հակառակը²:

Ուսումնասիրվող երեք լեզուներում անձի հատկանիշ արտահայտող հաղորդակցական դարձվածքներն օժտված են վերը նշված բոլոր առանձնահատկություններով: Յուրաքանչյուր նախադասություն արտահայտում է դատողություն և ունի տվյալ լեզվում հաստատված որոշակի կառուցվածք³:

² **Խ.Բադիկյան**, Ժամանակակից հայերենի դարձվածքային միավորները, ԳԱ հրատ., Երևան, 1986, էջ 305-307:

³ **Ա. Токмаджян**, “Очерки по сравнительной типологии английского, русского и армянского языков”, Е., 1995.

Խ. Բադիկյանը «Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները» գրքում նշում է. «Սովորական նախադասությունների նման դարձվածայինները նույնպես ըստ իրենց կառուցվածքի լինում են՝ պարզ և բարդ, միակազմ և երկկազմ, լրիվ և թերի, շաղկապավոր և անշաղկապ»⁴: Օրինակ. **Մեջքը պինդ է: Վերնահարկը դափարկ է: Մարմանդ ջուր է: Լեզվի տակ փուշ չկա: Կարմիր կովը իր կաշվից դուրս չի գա: Խորամանկ աղվեսը չորս ոտքով է թակարդն ընկնում:**

Ըստ իրենց հնչերանգի և իրականության նկատմամբ խոսողի ունեցած վերաբերմունքի՝ ուսումնասիրվող երեք լեզուներում դարձվածային նախադասությունները լինում են պատմողական, հարցական, հրամայական, բացականչական և խառը, ինչպես նաև հաստատական և ժխտական:

Բերենք մի քանի օրինակ:

Երբ նա դուրս է գալիս, արևն ամոթից ամպի տակ է մտնում:– Շատ գեղեցիկ:

Խաչ ունի՞ (խսկց.) – Անսիրտ, անխիղճ մարդու մասին:

Звезд с неба не хватают/ не хватал – (խսկց.) Միջին ունակությունների մարդ:

Myxu he obudum – Հլու, հնազանդ մարդ:

He is a regular flatfish – Հիմար երիտասարդ է:

Not so black as one is painted – Ոչ այնքան վատ մարդ լինել:

She is better than she is bonny – (շոտլանդ.) Ոչ միայն գեղեցիկ է, այլ նաև լավը:

What do you expect from a pig but a grunt – (խսկց.) Կոպիտ, անկիրթ մարդու մասին:

Պարզ նախադասության կառուցվածքով դարձվածային միավորները լինում են երկկազմ և միակազմ: Իրենց հերթին երկկազմ նախադասությունները լինում են համառոտ և ընդարձակ:

Համառոտ դարձվածային նախադասությունները հիմնականում երկբաղադրիչ են, և ստորոգյալը կարող է լինել թե՛ պարզ և թե՛ բաղադրյալ (բայական և անվանական):

Թե՛ հայերենում, թե՛ ռուսերենում և թե՛ անգլերենում ուսումնասիրվող հաղորդակցական դարձվածային միավորների մեջ ամենամեծ թիվ են կազ-

⁴ Խ. Բադիկյան, Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները, ԳԱ հրատ., Երևան, 1986, էջ 306:

մում պարզ ընդարձակ նախադասությունները, որոնց մի մասում ենթական հանդես է գալիս իր լրացումներով, մյուս մասում՝ ստորոգյալը՝ իր լրացումներով, կամ ենթական և ստորոգյալը՝ իրենց լրացումներով:

Բերենք անձի հատկանիշ արտահայտող հաղորդակցական դարձվածքների մի քանի օրինակ հայերենում, ռուսերենում և անգլերենում:

Աստված հոգի է տվել, չի կարող առնել - Ամբարիշտ՝ անխիղճ մարդ է:

Արև լինի՝ մարդու վրա չի ծագի (խսկց.) - Անբարյացակամ մարդ է:

Դու կա՞ս միայն երուսաղեմ - Միամիտ, անտեղյակ մարդ:

Կարին փակը՝ երեսը գիտցող (բրբ.) - Գիտուն մարդ է:

Կտավը նոսր է (խսկց.) - Անխելք, թեթևամիտ է, ծալը պակաս մարդ է:

Հո նրան ասած, հո պարին (ժող.) - Անզգա է, անհասկացող է:

Ճանճերը բերանին ծեպուկ դնել (գռիկ.) - Խեղճ, անճարակ, ողորմելի մարդ լինել:

Սև ու դեղին, ով որ տեսնի, պարոնի լեղին - Չափազանց տգեղ մարդ է:

Воды не замутит - Շատ հանգիստ, հնազանդ մարդ:

Материно молоко на губах не обсохло - (հեգն.) Երիտասարդ, անփորձ մարդ է:

Нос неidoroc - Շատ երիտասարդ մարդ է:

His head is screwed on the right way - Խելացի մարդ է:

He is too far north for me - Չափազանց խորամանկ մարդ է:

One's heart is/lies in the right place - Բարի մարդ լինել:

Վերը նշված դարձվածքներում գործում են քերականական այն նույն կարգերն ու շարահյուսական հարաբերությունները, ինչ որ սովորական նախադասություններում: Մեծ մասամբ հաղորդակցական նախադասություններն օգտագործվում են ժողովրդախոսակցական ոճում:

Ա. Մուրվալյանը «Հայոց լեզվի դարձվածաբանություն և բայակազմություն» գրքում գրում է. «Առաձների ու ասացվածքների մեջ իմաստի ուղղակի առման հետ միասին, այս կամ այն չափով, արտահայտված է նաև նրանց անուղղակի կամ փոխաբերական առումը: Այս տեսակետից էլ սրանք մոտենում են դարձվածային այն բառակապակցություններին կամ արտահայտություններին, որոնք կազմությամբ կարճ ու դիպուկ նախադասություններ են»⁵:

⁵ Ա. Մուրվալյան, Հայոց լեզվի դարձվածաբանություն և բայակազմություն, էջ 45:

Առաձներն ու ասացվածքներն ունեն բովանդակության խորություն. նրանց մեջ ամփոփված ու խտացված են ժողովրդի կյանքի տարբեր կողմերը: Հաշվի առնելով նրանց բաղադրամասերի փոխաբերական առումը և ընդհանուր իմաստը՝ շատ դեպքերում հնարավոր է դրանք արտահայտել ոչ թե հոմանիշ բառով, այլ ամբողջական նախադասությամբ:

Օրինակ՝

Գայլի գլխին ավերարան ես կարդում, ասում է ոչխարը սարը մնաց - Անուղղելի է:

Ծառը որ վեր ընկնի, կացնավորը կշարանա - Անպաշտպանի վրա բոլորը կհարձակվեն:

Мал золотник, да дорог – Կարճահասակ և երիտասարդ է, բայց օժտված է շատ դրական հատկանիշներով:

Наш пострел везде поспел – Ճարպիկ մարդու մասին:

Ранняя птичка носок прочищает/очищает, а поздняя глаза/глазки продирает - Աշխատասեր մարդու մասին:

Смола к дубу не пристанет - Ազնիվ մարդուն չես վարկաբեկի:

Яйца курицу не учат - Երիտասարդ մարդը չի սովորեցնում ավելի մեծին ու ավելի հմուտին:

Better be born lucky than rich = He родись красивой, а родись счастливой - Ավելի լավ է հաջողակ մարդ լինել, քան հարուստ:

Idle folks lack no excuses = У лентяя Федорки всегда отговорки = Лодырь всегда найдет причину, лишь бы не работать – Ծույլ մարդը միշտ պատրվակ է գտնում:

Greedy folk have long arms - Ազահ մարդիկ երկար ձեռքեր ունեն:

Բերված օրինակներից երևում է, որ առաձների և ասացվածքների փոխաբերական իմաստն արտահայտված է ամբողջական նախադասություններով: Սակայն գոյություն ունեն դարձվածային արտահայտություններ, որոնք իրենց փոխաբերական ընդհանուր կամ միասնական իմաստն արտահայտում են հոմանիշ բառերով կամ բառակապակցություններով: Օրինակ. **Բերանիցը կաթի համ է գալիս / բերանիցը կաթի հոտ է գալիս** - Դեռ անփորձ է, դեռ երեխա է: **Հազար ցավ ու դարդ տեսած** – Տանջված: **Իրար հենք հաց կիսած** – Մտերիմ:

ХАРАКТЕРИЗУЮЩИЕ КАЧЕСТВА ЧЕЛОВЕКА НОМИНАТИВНЫЕ И КОММУНИКАТИВНЫЕ ФРАЗЕОЛОГИЧЕСКИЕ ОБОРОТЫ В АРМЯНСКОМ, РУССКОМ И АНГЛИЙСКОМ ЯЗЫКАХ

МАРИАНА БАДАДЯН

В статье исследуются характеризующие качества человека номинативные и коммуникативные фразеологические обороты в армянском, русском и английском языках. Указанные обороты представляют собой различные разговорно-бытовые речевые штампы, языковые выражения народной мудрости, которые по структуре соответствуют предложению.

Ключевые слова – номинативные, коммуникативные фразеологические обороты, качества, фразеологические обороты, структура, предложение.

THE NOMINATIVE AND COMMUNICATIVE PHRASEOLOGICAL UNITS CHARACTERIZING A PERSON'S QUALITIES IN THE ARMENIAN RUSSIAN AND ENGLISH LANGUAGES

MARIANA BADADYAN

The article studies the nominative and communicative phraseological units characterizing the qualities of a person in the Armenian, Russian and English languages. Said phraseological units represent various cliches of colloquial phrases, linguistic expressions of folk wisdom time. Structurally they conform with a sentence.

Key words – nominative, communicative phraseological units, qualities, phraseological units, structure, sentence.